4671

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«07» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 106 - 25

Նախաձեռնողը՝ *«Ռուբեն և Էդվինա» ՍՊԸ*
Լոռու մարզ, Սպիտակ ք. Քրքորյանի փ. 194 տուն

Գործունեությունը՝ *Ղուրսալի Խաչակապի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ղուրսալի 3-րդ փեղամասի փակման աշխատանքներ*
Լոռու մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 106 - 25

«07» մայիսի **2025 թ.**

Լոռու մարզի Ղուրսալի Խաչակապի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ղուրսալի 3-րդ տեղամասի փակման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Ռուբեն և Էդվինա» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայր՝	Լոռու մարզ, Սպիտակ համայնք, Արջահովիտ բնակավայր

Ներածական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ ՇՄԱԳ) համաձայն՝ «Ռուբեն և Էդվինա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) նախատեսում է իրականացնել Ղուրսալի Խաչակապի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ղուրսալի 3-րդ տեղամասի փակման աշխատանքներ:

Աշխատանքների իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ «Ընդերքի մասին» օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6) կետի «ե» ենթակետով սահմանված՝ հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ հանքի փակման վերջնական ծրագրի կազմման հաստատումը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ 110-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 1) կետի «թ» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Ղուրսալի Խաչակապի ավազակոպճային խառնուրդի (այսուհետ՝ ԱԿԽ) հանքավայրի 3-րդ տեղամասը գտնվում է Սպիտակ համայնքի Արջհովիտ բնակավայրի վարչական տարածքում, բնակելի տարածքից 0.8 կմ հեռավորության վրա: Տարածքին բնորոշ է տիպիկ լեռնային, խիստ կտրատված ռելիեֆը, ռելիեֆի բացարձակ բարձրությունը տատանվում է 1455-1461 մմ սահմաններում: Ղուրսալի 3-րդ տեղամասն ամբողջությամբ զուրկ է բուսական ծածկույթից, հողի բերրի շերտը բացակայում է, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված պահպանության ենթակա բուսատեսակներ և կենդանատեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմամշակութային հուշարձաններ չկան: Ստորգետնյա ջրերի մակարդակը գտնվում է բավականին խորության վրա, տրանսանքային երևույթները բացակայում են :

Հանքավայրի ԱԿԽ պաշարները հաստատվել են 2003 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25 արձանագրությամբ՝ B+C_1 կարգով 217.3 հազ.մ^3 ծավալով, այդ թվում B - 47,3 հազ.մ^3, C – 170 հազ.մ^3 ստատիկ պաշարներ: ՇԱԹ-29/563 թույլտվությունը արդյունահանման ժամկետը 18 տարի է :

Ղուրսալի Խաչակապի հանքավայրի ընդհանուր մակերեսը կազմում է 9985 մ^2, որից 3-րդ տեղամասը՝ 3573 մ^2, որտեղ պաշարներն ամբողջովին մարված են, 2-րդ տեղամասի մակերեսը կազմում է 1841 մ^2, 1-ին տեղամասի մակերեսը կազմում է 4571 մ^2: 1-ին տեղամասում արդյունահանման աշխատանքներ չեն իրականացվել, 2-րդ տեղամասում պաշարները մարված են մասնակի, ռեկուլտիվացիա չի իրականացվելու: Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ 2025թ հունվարի 1-ի դրությամբ մնացորդային պաշարները կազմում են 73,77 հազ. մ^3:

Ղուրսալի 3-րդ տեղամասում արդյունահանման աշխատանքները իրականացվել են բաց եղանակով՝ ընդերկայնական, խորացվող մշակման համակարգով, լցակույտ առաջացրած ապարները, որոնք ներկայացված են մալաբացման ապարներով և տիղմային նյութով՝ կուտակվել են բացահանքի արևելյան մասում, ժամանակավոր արտաքին լցակույտում, որի առավելագույն բարձրությունը կազմում է 5 մ: Շահագործման 7-րդ տարվանից սկսած իրականացվել է ներքին լցակույտաառաջացում և բացահանքի հատակի հարթեցում:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության նախատեսվում է ռեկուլտիվացնել 3573 մ^2 ամբողջությամբ մարված պաշարների հատվածը: Ղուրսալի 3-րդ տեղամասի փակման աշխատանքներից հետո Ընկերությունը կդադարեցնի հանքավայրի արդյունահանման աշխատանքները և կդիմի տարածքային կառավարման ենթակառուցվածքների նախարարություն՝ ընդերքօգտագործման թույլտվությունից հրաժարման նպատակով:

Տեղամասի փակման նպատակով նախատեսվում է իրականացնել ստորև թվարկված միջոցառումները.

- ենթակառուցվածքների, մեքենաների, սարքավորումների և շինությունների ապամոնտաժում,
- ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, շինարարական աղբի և չօգտագործված նյութերի դուրս բերում,
- օգտակար հանածոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացում,
- աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիր,
- մշտադիտարկման պլանի իրագործում նախատեսված ժամանակաշրջանում:

Համաձայն Կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 1643-Ն որոշման պահանջների՝ որպես խախտված հողերի ռեկուլտիվացման ուղղություն ընտրվել է գյուղատնտեսական ուղղությունը՝ տեխնիկական և կենսաբանական փուլերով:

Տեխնիկական ռեկուլտիվացիայի փուլում Ընկերությունը նախատեսում է իրականացնել շահագործման հետևանքով խախտված տարածքների հարթեցում, թեքությունների ձևավորում, անհրաժեշտության դեպքում ցամաքուրդային (դրենաժային) համակարգի կառուցում: Տեխնիկական ռեկուլտիվացիայի ընթացքում աշխատելու է մեկ բուլդոզեր, օգտագործվելու են միայն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները:

Կենսաբանական ռեկուլտիվացիայի նպատակով նախատեսվում է հարթեցումից հետո իրականացնել հողի պարարտացում գրանուլացված կենսահումուսով, համալիր օրգանահանքային պարարտանյութերով: Հողի պարարտացումից հետո կատարվելու է

տարածաշրջանի լանդշաֆտներին բնորոշ բույսերի սերմերի ցանքս և սածիլների տնկում:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքի հաշվարկը կատարվել է «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» Կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1352-Ն որոշման համաձայն և 3573 մ^2 տարածքի ռեկուլտիվացիայի գումարը կկազմի համամասնորեն՝ 259735,81 ՀՀ դրամ:

Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով նախատեսվում են իրականացնել մշտադիտարկումներ՝ համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի N 22-Ն որոշման պահանջների:

Մշտադիտարկումների իրականացման դիտակետերը նախատեսվում է տեղադրել՝

- Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքում՝ հայղվող տարածքի կողերի դեֆորմացիաները (սողանքներ, փլուզումներ), ռեկուլտիվացիոն աշխատանքների արդյունքը գնահատելու նպատակով:
- Մշտադիտարկումների պարբերականությունը՝ տարեկան 1 անգամ:
- Մշտադիտարկման ձևը՝ տեղազննություն:

Մշտադիտարկումներն իրականացվելու են 5 տարի տևողությամբ՝ մինչ երկրադինամիկ, հիդրոդինամիկ և շրջակա միջավայրի սահմանված թույլատրելի նորմերը բնութագրող ցուցանիշների կայունացումը:

Պատճառաբանական մաս. Լոռու մարզի Ղուրսալի Խաչակապի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ղուրսալի 3-րդ տեղամասի փակման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, տարբեր գերատեշչություններ, Լոռու մարզպետարանը, Սպիտակի համայնքապետարանը: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հաշվետվության լրամշակումներում:

Օրենքով սահմանված կարգով ազդակիր համայնքում իրականացվել է հանրային 2-րդ լսումը, որի ընթացքում մասնակիցների կողմից նշվեց, որ «Ռուբեն և Էդվինա» ՍՊԸ-ն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել համայնքի սոցիալական ծրագրերի իրականացման գործընթացին և նախատեսվող գործունեության վերաբերյալ հնչեցին դրական կարծիքներ:

Շահագործման աշխատանքների ավարտին բոլոր աշխատակիցներին կվճարվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրամական փոխհատուցում, ինչն աշխատակիցներին հնարավորություն կընձեռնի անցնել մասնագիտական վերարակավորում: Աշխատուժի սոցիալական մեղմացման նպատակով կտրամադրվի 750 000 ՀՀ դրամ 7 աշխատողի՝ վերարակավորման և այլ ճյուղերում աշխատանքի տեղավորվելու համար: Հանքավայրի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման նպատակով նախատեսվում է ցուցաբերել մասնակցություն համայնքի ծրագրերին՝ տրամադրելով շուրջ 350 000 ՀՀ դրամ:

Փորձաքննական պահանջներ

- Փակման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական նորմերի պահպանմանը նպատակով:
- Խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Թափոնների մասին» օրենքների պահանջները, ինչպես նաև գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:
- Իրականացնել տարածաշրջանի լանդշաֆտներին բնորոշ բույսերի ցանքս:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ռուբեն և Էդվինա» ՍՊԸ-ի կողմից Լոռու մարզի Ղուրսալի Խաչակապի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ղուրսալի 3-րդ տեղամասի փակման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պարտականությունները կատարող՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան